

Խնդրեցի այս քարը տէրն չը տուաւ. խնդրեցի դրամով գնել, խիստ մերժողական պատասխան ստացայ, «հարուր օսկի լէ տաս, ըսկի չիտամ». բայց վեց ամիս յետոյ 1880 թուի սովոյն ինչ ինչ հատուցումներով կորզած՝ բերել տուած եմ Թօփրազ-գալէ, նաև Միացեալ ընկ. Նորաշէն վարժարանի որմին մէջ հիւսել տուած եմ որպէս զի ինչ ինչ առթիւ յափշտակութեան չենթարկուի:

Այս սեպագրութիւնը կը գտնուի արևելեան անկիւնը՝ երեսն դուրս: Քարն կարծր լինելով՝ բևեռագիրք անեղծ մնացած են:

1. Գ Ո Մ Ք

Գոմք կը նշանակէ Գոմեր. արդէն այս կողերուն վերայ այս անունով քանի զիւղօրայք կան, որք ժամանակին Շեռեան գետոյն ձախ եզրին վերայ գտնուած Խաստուր, Գարսհան, Գաւոյ, Զուրուք, Զըլիանի զիւղօրէից գոմերն եղած են և այժմ ևս այս զիւղօրայք իւրեանց շուրջն արօտավայր չունենալով ստիպուած են հանդէպ ջրոյն՝ այս կողերուն վերայ գոմեր շինելով իւրեանց հօտը այս կողմ պահել. ձմրան և ամրան եղած է ժամանակ որ աւազակաց երկիւղից քանի տարիներ անշէն մնացած են այս գոմեր. որով քրդեր և վերջին պատերազմէն յետոյ գաղթական թուրքեր այս վայրերն զտած են դատարկ և պատրաստ գոմեր, սկսած են բնակութիւն հաստատել և իւրացնել. տակաւ առ տակաւ իւրեանց շուրջն գտնուած մարգագետիններն վարել և սերմանել: Այսպիսի գոմեր կը գտնուին Խաստուրայ,